ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ
ՀՈՎՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

<< 14 >> 04 2011թ.
N: 2

գ. Հովտուն
Հեռ. (077) 44-29-13

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ԳԻԶԻՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Գիզիրյան

Ձեզ է ներկայացվում Հովտունի համայնքի ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 30-ի նիստի թիվ 18-Ն, 2011 թվականի հունվարի 11-ի նիստի թիվ 1-Ն, հունվարի 12-ի նիստի թիվ 5-Ն որոշումները:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Կատարող՝ Շ. Շահբազյան

2191-11
14. 04 2011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ՀՈՎՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 18-Ն

30 դեկտեմբերի 2010թ. գ.Հովտուն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀՈՎՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2010 ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 2-րդ, 6-րդ և 7-րդ մասերի դրույթներով՝

Համայնքի ավագանին որոշում է

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հովտունի համայնքի 2010 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը համաձայն հավելվածի:

Ավագանու անդամներ

Դ. Տոնոյան - կողմ
Ա. Առաքելյան - կողմ
Ա. Գալոյան - կողմ
Հ. Գալոյան - կողմ

Համայնքի ղեկավար՝ Ա. Առաքելյան

30 դեկտեմբերի 2010թ.
գ.Հովտուն

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Հովտունի համայնքի
ավագանու 2010 թվականի դեկտեմբերի 30-ի
թիվ 18-Ն որոշման

Եկամտային մաս	2010 թվականի բյուջեի պլան	Փաստացի կատարողական	Կատարման տոկոսը
Հողի հարկ	1396.8	1390.8	99.0
Հողի վարձակալության վարձավճար	481.7	473.8	98.36
Գույքահարկ	122.9	100.3	81.67
Անասնաբուժ	600.0	600.0	100
Դոտացիա	3500.0	3500.0	100
Ֆոնդային մնացորդ	354.3	-	-
Ընդամենը եկամուտներ	***6455.7***	***6064.9***	***93.9***

Ծախսային մաս	2010 թվականի ճշտված պլան	Փաստացի կատարողական	Կատարման տոկոսը
Աշխատավարձ	2792.7	2792.7	100
Սոցիալական ապահովագրություն	667.7	645.4	96.5
Կոմունալ ծառայություններ	250.0	250.0	100
Գործուղում	150.0	150.0	100
Անասնաբուժ	600.0	600.0	100
Գրասենյակային նյութեր	100.0	100.0	100
Համակարգչային ծառայություններ	150.0	36.9	24.1
Սոց. նպաստներ	300.0	300.0	100
Բնապահպանության վճար	30.0	20.0	69.1
Էլեկտրաէներգիա	100.0	65.0	65
Պահուստային միջոցներ	961.9	950.0	98.8
Կարչական սարքավորումներ	354.3	-	-
Ընդամենը ծախսեր	***6455.7***	***5910.0***	***91.5***

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ՀՈՎՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 1-Ն

1 հունվարի 2011թ. գ.Հովտուն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀՈՎՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասի դրույթներով

Համայնքի ավագանին որոշում է

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հովտունի համայնքի 2011 թվականի բյուջեն համաձայն հավելվածի:

Ավագանու անդամներ

Հ. Տոնոյան - կողմ

Ա. Առաքելյան - կողմ

Ա. Գալոյան - կողմ

Հ. Գալոյան - կողմ

Համայնքի ղեկավար՝ Ա. Առաքելյան

1 հունվարի 2011թ.
գ.Հովտուն

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Հովտունի համայնքի
ավագանու 2011 թվականի հունվարի 11-ի
թիվ 1-Ն որոշման

Եկամտային մաս	Հաշվարկային
Հողի հարկ	1331.8
Վարձակալական հողեր վճար	824.7
Գույքահարկ շին.	0.4
Գույքահարկ մեք.	122.9
Պետության կողմից պատվիրակված լիազորություններ	600.0
Դոտացիա	3500.0
Ընդամենը եկամուտներ	***6379.8***

Տարեսկզբի ազատ մնացորդը 1651.5 հազ.դրամ

Ծախսային մաս	Հաշվարկային
Աշխատավարձ	3288.0
Հենսաթոշակային ֆոնդ	973.4
Էլեկտրաէներգիա	125.0
Գործուղում	100.0
Գրասենյակային ծախսեր	150.0
Պետության կողմից պատվիրակված լիազորություններ	600.0
Սոց. օգնություն	300.0
Կոմունալ ծախսեր	200.0
Միջ.մասն.կրթ.	50.0
Սոց. վճար	70.0
Համակարգչային ծառայություն	150.0
Պահուստային ֆոնդ	528.3
Մեք.սարքավորում.	1496.6
Ընդամենը եկամուտներ	***8031.3***

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ՀՈՎՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 5-Ն

12 հունվարի 2011թ. գ.Հովտուն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀՈՎՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18-րդ, 19-րդ կետերի, <<Տեղական տուրքերի և վճարների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ, 10-րդ և 11-րդ հոդվածների դրույթներով

Համայնքի ավագանին որոշում է

Սահմանել Հովտունի համայնքի տարածքում 2011 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:

Ավագանու անդամներ

Ռ. Տոնոյան - կողմ

Ա. Առաքելյան - կողմ

Ա. Գալոյան - կողմ

Հ. Գալոյան - կողմ

Համայնքի ղեկավար՝ Ա. Առաքելյան

12 հունվարի 2011թ.
գ.Հովտուն

Հավելված
Հայաստանի Հանրապետության
Շիրակի մարզի Հովտունի համայնքի
ավագանու 2011 թվականի հունվարի 12-ի
թիվ 5-Ն որոշման

1	Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ՝ ոչ հիմնական) շինության (տեղադրման) թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝	
	1/ հիմնական օբյեկտների համար ա.մինչև 300քառ.մ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների,ինչպես նաև 200քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝	չորս հազար հինգ հարյուր դրամ
	2/ 1-ին կետի ա ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝ ա.201-ից մինչև 500 քմ ընդ.մակերես ունեցող օբյեկտների համար՝	ինը հազար դրամ
	բ.501-ից մինչև 1000քմ ընդ. մակերես ունեցող օբյեկտների համար՝	տասնհինգ հազար դրամ
	գ.1001 և ավելի քմ ընդ. մակերես ունեցող օբյեկտների համար՝	քսանմեկ հազար դրամ
	3/ Ոչ հիմնական օբյեկտների համար ա.մինչև 20քմ ընդ. մակերես ունեցող օբյեկտների համար՝	ինը հարյուր դրամ
	բ. 20 և ավելի քմ ընդ. մակերես ունեցող օբյեկտների համար	մեկ հազար հինգ հարյուր դրամ
2	Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման,աշխատանքների(բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝	
	1/չի նախատեսված կցակառույցների, վերակառույցների, շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդ. մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝	ինը հարյուր դրամ
	2/բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման,վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից,նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքերի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների(այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդ. մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության,ապա,բացի սույն կետի 'ա' ենթակետով սահմանված դրույքաչափի,կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդ. մակերեսի ավելացման կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխության մասով. 3/նախատեսվում է միայն կցակառույցների, վերակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների(այդ թվում՝ ստորգետնյա) շինության կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն, ապա սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:	
3	3.Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրք սահմանվում է՝	մեկ հազար հինգ հարյուր դրամ
4	Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է. 1/ ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝	չորս հազար հինգ հարյուր դրամ
	2/ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝	չորս հազար հինգ հարյուր դրամ

5	Համայնքի տարածքում՝ 1/ բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրք սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար՝	երեք հարյուր հիսուն դրամ
	2/ հեղուկ վառելիքի,տեխնիկական հեղուկների,հեղուկացված գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի, տեխնիկական հեղուկների, հեղուկացված գազերի վաճառքի թույլտվության համար տեղական տուրք ընթացիկ տարվա համար սահմանվում է՝	մեկ հարյուր հիսուն հազար դրամ
6	Համայնքի տարածքում՝ թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առքուվաճառքի վաճառքի թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր տարվա համար սահմանվում է՝	հիսուն հազար դրամ
7	Համայնքի տարածքում՝ առևտրի, հանրային սննդի, զվաճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները,բաղնիքները, խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ տեղական տուրք ընթացիկ տարվա համար սահմանվում է՝	
	1/ առևտրի օբյեկտների համար՝	քսանհինգ հազար դրամ
	2/ հանրային սննդի, զվարճանքի օբյեկտների համար՝	հիսուն հազար դրամ
	3/ բաղնիքների համար՝	երկու հարյուր հազար դրամ
	4/ խաղատների համար՝	հինգ հարյուր հազար դրամ
	5/ շահումով խաղերի կազմակերպման համար՝	երկու հարյուր հիսուն հազար դրամ
	6/ վիճակախաղերի կազմակերպման համար՝	մեկ հարյուր հազար դրամ
8	Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քմ տեղական տուրքը սահմանվում է	
	1/ ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝	մեկ հազար դրամ
	2/ թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝	երկու հազար հինգ հարյուր դրամ
	3/ այլ արտաքին գովազդի համար՝	հինգ հարյուր դրամ
	դ.դատարկ գովազդային վահանակների համար՝	յոթ հարյուր դրամ
9	Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճենների և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝	մեկ հարյուր դրամ
10	Համայնքի տարածքում (բացառությամբ թաղային համայնքների) մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է՝	մեկ հազար դրամ

2. ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐ

1	Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝	մեկ հազար դրամ
2	Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար սահմանել՝	մեկ հազար դրամ
3	Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, վարձակալության տրամադրելու դեպքերում, անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝	մեկ հազար դրամ